ՆՈՐ-ԴԱՐ

№ 154 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 8 Հոկտեմբերի 1892 Հինգշաբթի, 8 Հոկտեմբերի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 154

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գնահատութիւնը 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

Հոկտեմբերի 1-ից մինչև տարեվայ վերջը «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 3 ր. 50 կ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ։— Գործելու ասպարէզ։
Քրոնիկոն. — Նոր հանքային ջուր։ Շուշուց։ Թեհրանից։ Բարեգործական ընկերութիւնների մի պատասխանատուութիւն։ Պրեմիաներ տասնչոր Ձիերի մրցութիւն։ Հայոց լուրերի ներկայացուցիչ։ Պաշտօնական տեղեկութիւններ խմբագրի մասին։ Վատախոց։ Մի նոր մրցանակի լոգիական։ Նոր գիրք։
Ախտաճանչման հայ թերթերում կարդում ենք։
Մանկավարժական նշմարներ I.
Թղթակցութիւններ. — Դանձակ։ Վաղարշ։
Բաղաքական. — Սաքսըն-Վայմարի մեծ հերց. գոյքի ոսկի պատկառելիութեան առթիւ։ Լոնդոնի արհեստագէտների ժողովը։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Բանասիրական. — Ներումն։
Տեղեկատուութիւններ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 7 հոկտեմբերի 1892 թ.

Իմերխեվի մէկ անկիւնում, Ուճա կոչուած գաւառով անցնողը հանդիպում է Օնի կոչուած գիւղաքաղաքին։

Վրաստան շլացուած հայերից մի գաղթականութիւն հաստատուած է այդ խաղաղ ու աշխարհից մատացուած անկիւնում։ Հայ գաղթականութիւնն այդտեղ, ինչպէս և Վրաստանի շատ տեղերում, կարճ ժամանակամիջոցում կորցրել է իւր լեզուն, իւր հայրենի սովորութիւնները և ամեն կերպ վրացի է դարձել. եթէ այսօր նա իրեն հայ է անուանում, այդ էլ հայոց եկեղեցուն ենք պարտական, որի շնորհիւ հայութիւնն այսպէս թէ այնպէս պահպանուել է հայրենի երկրից անջատուած հեռաւոր երկրներում գեգերուող հայ ծագումով գաղթականութիւնների մէջ։

Զարմանալի է, որ ոչ մի օտար լեզու այնպէս արագութեամբ չէ մարսում և ոչնչացնում հայերէն լեզուն, ինչպէս վրաց լեզուն է այդ անում։

Պարերի ընթացքում Թումանեանի, Պալիցիայի, Հնդկաստանի և այլ հեռաւոր երկրների հայ գաղթականութիւնների մէջ պահպանուել է քիչ թէ շատ հայոց լեզուն, հայրենի սովորութիւնները, այն ինչ մի 60—80 տարուայ ընթացքում Վրաստանում և Իմերխեթում գաղթականութիւն հաստատուող հայերի մէջ հայոց լեզուն բոլորովին անհետացել է և եթէ վիրահօս հայերն իրենք չասեն, որ հաւատով հայ են,—ոչ լեզուից, ոչ արտաքինից չի կարելի նկատել, որ նրանք հայ են։

Այսպէս Օնիից մի վրացի մեզ գրում է, որ այնտեղի հայ գաղթականութիւնը գոլորց չունի և հայերէն ոչ խօսում է և ոչ էլ հասկանում է. իրեն հայ է անուանում միմիայն նրա համար, որ գաւանութեամբ հայ է։ Եկեղեցու հետ կապուած լինելով այդ տեղի հայ գաղթականութիւնն անշուշտ ցանկանում է հասկանալ իւր եկեղեցու ժամասացութիւնը և ծիսակատարութիւնները, որովհետև ոչինչ չէ հասկանում, շատ յաճախ է ծաւալով լիշում է այդ հատարակութիւնն իւր խաւար գրութիւնը, դրա համար կամենում է հանել մատաղ սերունդն այդ խաւարից։

Օնիի հայ գաղթականութիւնը ուզում է մի գպրոց ունենալ, որտեղ մատաղ սերունդը կարողանար հայերէն կարդալ, գրել, խօսել սովորել և հասկանար իւր կրօնը, նրա պատուէրները։ Գպրոց ունենալ կամենում է հայ գաղթականութիւնը, բայց չգիտէ թէ ինչպէս անէ։

Այդ մասին պարտաւոր էր հոգալ գաղթականութեան հոգևոր հովիւը, բայց գժբաղդաբար այդ քահանան հայերէն չէ հասկանում և բոլորովին անտարբեր է դէպի գպրոցի բացման գործը։

Ի՞նչ պէտք է անել։

Ահա բարեգործական ընկերութիւնների համար գործելու ասպարէզ։ Բայց ինչո՞ւ ենք հեռու գնում. մեզ մօտ, Թիֆլիսից երեւացող մի քանի վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Ծդնէթի վիրահօս գիւղում եղած գպրոցն էլ փակուեցաւ, փակուեցաւ այն ժամանակ, երբ Հրապարակի վրայ փառաբանւում էր մեր թեմի չեղած բարեկարգ վիճակը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Վազախից մեզ գրում են, որ Լալի գիւղի հանդում Կարմիր քարի առաջ, հրաշալի անտառապատ հովտում նոր բերուած հանքային ջուր է գտնուել, որը դեղին գոյն ունի, համեղ քաղցր է թուում, իսկ մի քիչ չիաոյ թեթև թթուութիւն է տալիս։ Առաջին օրերին կարճ ժամանակում վերջ է դնում այդ ջուրը. նրա մէջ լողացողը շատ գուարթանում է։ Փորձութիւնը ուրախութեամբ գործ են ածում նրանից Փեմիագէնների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ ջրի վրայ։

—

ՇՈՒՇՈՒԻՑ.—Հոկտեմբերի 2-ին վախճանուած սիկիլն Խանում Ադամեանի որդին պ. Յ. Ադամեանը հետևեալ հիմնարկութիւններին նուիրում է հետևեալ գումարները. 400 ր. Թեմական դպրանոցին, 400 ր. օրիորդաց Մարիամեան ուսումնարանին, 300 ր. Բար. Ընկ. տեղական Հիւղին, 300 ր. ռէալական դպրոցին, 200 ր. ազքատներին բաժանելու, 50 ր. կուսանաց մենաստանին, 100 ր. Վաղանչեցոց եկեղեցուն և 400 ր. Մայր Աթոռին, ընդամենը 2150 ր.։

—

ԹԵՀՐԱՆԻՑ մեզ գրում են, որ այնտեղ Լոլերան ներկայացմա հաւաքել է. օրական մեռնում են 2—3 հոգի։ Մինչև այժմ մեռնողների թիւը հասնում է 40 հազար հոգու։

—

Ուսերիայում գտնուած բոլոր բարեգործական ընկերութիւնները պարտաւորուած են ամեն տարի իրենց գործունէութեան մասին հաշիւ ներկայացնել բացի ներքին գործերի մինիստրութիւնից, նաև արտաքին գործերի մինիստրութեան ներքին հաղորդակցութիւնների դեպարտամենտին։

—

Թիֆլիսի Հիերի ցուցահանդէսում դրամով, գովաբանական թղթերով և մեդալներով պրեմիաներ ստացել են ընդամենը 40 Ձի։

—

Հայոց Թատրոնական խմբի երկրորդ ներկայացումը տեղի կունենայ կիրակի հոկ. տեմբերի 11-ին. կրներկայացուի Օստրովսկու «Արդիւնաւոր պաշտօն» պիեսը, որին կրմասնակցէ նոր դերասանուհի օր. Ախաչևան, որ երբեմն-երբեմն խաղացել է ռուսաց բեմի վրայ։ Միևնոյն ներկայացմանը մի վոդեվիլում կրմասնակցէ հայազգի տիկին Սափարեան-Աբաշիձէ, որ մինչև այժմ ամենայն աջողութեամբ խաղում էր վրաց բեմի վրայ։

—

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ Նորից գիւղում խոլերայը դէմ մինջոցներ ձեռք առնելու համար այնտեղ է ուղարկուած Թիֆլիսի 11-րդ առաջնակարգ խումբը։

Նոյն տեղեկութիւններից երևում է, որ Թիանեթում սեպտեմբերի 3-ին հիւանդացել է 1 հոգի։ Թերաւում և գաւառում խոլերան դադարած է։ Թիֆլիսի գաւառի Վարա-Թափա գիւղում խոլերա է յայտնուել և այնտեղ մի բժիշկ է ուղարկուած իւր ֆելդշերով։

—

ՂԱԶԱԽԻՑ.—Լալի գիւղացիք 10 տարի կայ, որ երենց հին գիւղատեղից քոչել են Նորաչէն ասուած տեղը։ Գիւղի հասկացող և եկեղեցասէր անդամներից մի քանիսը գիւղամիջում մի հիանալի տեղ վերցրին եկեղեցու համար, սակայն գիւղացիք յայսօր չկարողացան եկեղեցու հիմք գցել և եկեղեցական տեղը կամաց-կամաց սա, նա գաւթեց։ Այն գեղեցիկ տեղից այսօր մի՛ կաոր է մնացել, որը, հաւանական է, որ էլի անցնի սրա-նրա ձեռքը։ Հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը, որ իւր եկեղեցու տեղին տէրութիւն անի, հակառակ պիտանացում գիւղում ուրիշ տեղ չունենալու պատճառով Լալի գիւղացիք անեկեղեցի կրմնան, ինչպէս մինչև այսօր։ Եկեղեցու կորցրած տեղը վերստին ձեռք գցելու միակ ճանապարհն այն է, որ կոնսիստորիան Վազախի Ա. մասի գործակալի միջոցով գիւղացիներից երաշխաւորութիւն վերցնի, որ նրանք գիւղում եկեղեցի կշինեն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՈՒՄՆ

(ՕՍԿԱՐ ՄԵՏԵՆԻԵԻՑ)

Մոգոսի բանտում, խուց 36.

Ես ձեզ գրում եմ, պարոն վաստակաւոր, վշտացած և յուսահատ հոգով։ Երբ դուք հեռանում էիք իմ սենեակից, ես ձեր դէմքից հասկացայ, որ կասկածում էք իմ խոստովանութեանը անկեղծութեան վրայ։ Մինչդեռ վկայ է Աստուած, թէ որքան անկեղծ էր իմ պատմածս։

Գուցէ իմ պատմութիւնս բոլորովին կատով չէր։ Գուցէ ես ձեր հարցումներին կակազելով էլ պատասխանում։ Այո... Ճշմարիտ է, այժմ յիշում եմ, ես կակազում էի, շփոթւում էի... Ձեզ մօտ, ինչպէս և դատական քննչի մօտ, ես այնպիսի հոսք չէի գտնում, որ ուղղակի մարդիս հոգին Թափանցէր։

Երբ ինձ հարցաքննում են, չեմ իմանում ինչ է լինում իմ խեղճ, աշխարհիկ եղած խելքիս... Շատ բան եմ ուզում ասել, բայց համարեա ոչինչ չեմ ասում.... Մաքերս շփոթւում են... լեզուս կարկամում է... Գիտեմ, ես անկարող եմ ոչ մինին հասկացել, բայց ես յանցաւոր չեմ, հրդեհում եմ.... Ես անբաղդ մարդ եմ միայն, անողոք Ճակատագրի զոհ, մանաւանդ Ձոյլ կամքի տէր մի մարդ։

Շատ անգամ ես ինքս ինձ հարցնում եմ, արդեօք խելքս չեմ Թոցրել։

Երբ իմ խոլ չորս պատերի մէջ մենակ եմ մնում, մտքով սրտնում եմ դէպի անցեալը։ Ամբողջ կեանքս կարճ աչքիս առաջն է գալիս... և ես ամենայն տեղ տեսնում եմ սխալանք, Թուլութիւն, Ճակատագրութիւն, որոնք աւելի ևս համոզում են ինձ, Թէ ես ցնդուել եմ....

Բայց և այնպէս յանցաւոր չեմ ես... մինչև անգամ ես չեմ կարող յանցաւոր լինել։ Երբ յիշում եմ յանցագործութեան օրը, որի համար մեղադրում են ինձ և որը ես կատարել եմ... քան երևոյթին... ուժգին բռնում եմ գլուխս և ինքս ինձ հարցնում – ինչի՞ համար։ Ինչը կարող էր ինձ դրդել այդ բանն անելու....

Սպանել եմ... բայց, առոչ գատելով, ես պէտք է սպանութիւնն այդ օրուանից առաջ գործած լինէի, օր, որն ինձ կատարեալ ազատութիւն պարգևեց....

Հաւատացնում եմ Ձեզ, Պարոն պաշտպան, որ յիրաւի ես ցնդուած պէտք է լինիմ։ Մինչև վերջը կարգացէք Նամակս, և եթէ կարդալուց յետոյ Ձեր սիրտը ցաւակցութեամբ չի համակուիլ, եթէ ամենաիզուր կասկած անգամ մնայ իմ անկեղծութեանը մասին, այն ժամանակ հրաժարուեցէք, մի պաշտպանէք ինձ։

Ես ծնուել եմ Ֆրանսիայի կեզրոնում, Բերըհում։ Ծնողներս հասարակ, ազնիւ մարդիկ էին և յոյս ունէին, որ ես էլ նոյնպիսի մարդ դուրս կանամ... Ես նրանց յոյսը չարդարացրի... Գըլխումս յիմար մտքեր էին պատում անկախութեան, ազատութեան մասին.... Ես Ֆեթեևամիա էի, ծոյլ.... Իմ բնաւորութիւնս քաջասրտութեան և վախկոտութեան մի զարմանալի խառնուրդ էր, որին խառն էր նաև բառական չափով հպարտութիւն.... Ես ուզեցի դերասան դառնալ.... Ինձ ասում էին, որ ես գեղեցիկ դէմք, լաւ կազմուածք ունեմ։ Ծնողներս այդ մտքիս ընդդիմացան,—և ես մի Թափառական դերասանական խմբի հետ վեր կացայ ու վազեցի։ Այդտեղ ես ընկայ մի ծիքծիքուն կնոջ ազդեցութեան տակ, մի գօրեղ կամքի տէր կնոջ, որ ինձանից տաս տարով մեծ կըլինէր։

Ինձ գլխատեր սիրահարի դերեր էին տալիս. այդ ժամանակ տասնուվեց տարեկան էի։

Ինձ հովանաւորող կնոջ անունն էր Ինեսսա։ Ա՜հ, այդ կինը... Նա իմ սիրոյ առաջին ուսուցիչն էր։ Նա ինձ սիրեցրեց ինձ. ես նրան փոքռեցի ու տեսայ, որ չար, կամաչէ, մանուանդ տարիքն առած մի կին է։ Ուզում էի նրա հետ ունեցած կապս խզել։ Բայց մի այնպիսի ընդհմութեան հանդիպեցայ, որ անկարող եղայ յաղթել։... Ինեսսան սատիկ հարուստ էր։

—Դու ինձ ես պատկանում.... Դու իմ կեանքն ես,—և դու չափազանց Թանկ արժես ինձ համար։

Այդ ժամանակից սկսած կատարեալ հսկողութիւն էր նշանակել վրաս, որի դէմ բողոքելու այժ չունեցայ իմ վախկոտութեանս պատճառով։

Բարերաղդաբար կամ գժբաղդաբար մեր խումբը ցրուեց։ Այն ժամանակ մենք գտնուում էինք Պարիզից 20 վերստ հեռու, ուր Ինեսսան մի պատուական մայր ունէր. մայրը Բելվիլում խանութ էր պահում։ Ինեսսան ինձ խոստացաւ տեղ Ձարել,—և ես հետևեցի նրան։ Բայց երբ Պարիզ հասանք, մի սարսափելի լուր լսորտակեց մեր յոյսերը։

Պատերազմը սկսուեց։

Բայց հո Ձարկաւոր էր ապրել... Ինեսսան դարձեալ խանութային դատնալով, ամեն Ձարկաւոր պիտոյք հայթայթում էր ինձ։ Բայց այն ժամանակ ես աւելի ևս զգայի իմ սարիւթեանս ծանրութիւնը.... Նա նախանձոտ հոգածութեամբ սկսաւ հսկել իմ ամեն մի քայլիս, ամեն մի հայեացքիս։

Իսկ գէպքերն արագութեամբ առաջ էին գնում։ Պարիզը պաշարուեց... Ինձ լաւ առիթ ներկայացաւ իմ ապատութիւնս ձեռք բերելու և ես լիովին օգտուեցայ այդ առիթից։

Մի օր անհետացայ և խուզարկու դնդի զինուոր գրուեցայ։ Ես իմ պարտականութիւնս կատարեցի.... Մի քանի Ճակատամարտների մասնակցեցի.... Յետոյ Լաղաքութիւնն հաստատուեց... և սկսաւ սարսափի ժամանակը՝ կոմունան։

Այդ ժամանակից սկսուեցին իմ գժբաղդութիւնները։

Ինքս էլ չգիտեմ, Թէ ինչի կոմունիստների խմբին միացայ.... Ինձ սպայ սրբին. յետոյ լչացնանաս, ասպա կասիանչ—և այս ամենը 20 տարեկան

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԱՄՍԱԳՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ

«Պատկեր Պատմական Հանդէսի հրատարակութեան ծրագրի մասին։

Ի նկատի ունենալով այն մեծ դերը, որ պատմական գիտութիւնը կատարում է ազգերի կեանքում, ինչպէս նաև այն մեծ օգուտները, որ նա կարող է տալ ամեն մի ազգի, որ ձգտում է ինքնագիտակցութեան, մենք որոշեցինք հրատարակել պարբերական հանդէս, որ նուիրուած լինի հայոց պատմութեան, ազգագրութեան, լեզուի և գրականութեան։

Մեր հանդէսը կը լինի ամսագիր, որ կը դուրս գայ տարին 12 անգամ, այսինքն ամեն ամսի 1-ին։ Ամեն մի տետր կը բաղկանայ առնուազն 5 տպագրական մամուլի թերթերից։

Մեր հանդէսի մէջ կը տպուին հետևեալ յօդուածները։

I

Մեր պատմագրութեան ընդհանուր ուրուագիծը։ Մեր պատմագրութեան ներկայացուցիչները։ Մեր հին պատմագրութեան աղբիւրները։ Մեր նոր պատմագրութեան աղբիւրները։ Մեր պատմագրութեան ներկայ դրութիւնը։ Մեր պատմագրութեան ապագայ ուղղութիւնը։

II

Հայ ժողովրդի ծագումնաբանական աղբիւրները։ Հայ ժողովրդի ծագումնաբանական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ ժողովրդի ծագումնաբանական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ ժողովրդի ծագումնաբանական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

III

Հայ ժողովրդի ազգագրական աղբիւրները։ Հայ ժողովրդի ազգագրական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ ժողովրդի ազգագրական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ ժողովրդի ազգագրական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

IV

Հայ լեզուի պատմական աղբիւրները։ Հայ լեզուի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ լեզուի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ լեզուի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

V

Հայ գրականութեան պատմական աղբիւրները։ Հայ գրականութեան պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ գրականութեան պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ գրականութեան պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

VI

Հայ հասարակական կեանքի պատմական աղբիւրները։ Հայ հասարակական կեանքի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ հասարակական կեանքի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ հասարակական կեանքի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

VII

Հայ գիտութեան պատմական աղբիւրները։ Հայ գիտութեան պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ գիտութեան պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ գիտութեան պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

VIII

Հայ արուեստի պատմական աղբիւրները։ Հայ արուեստի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ արուեստի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ արուեստի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

IX

Հայ տնտեսական կեանքի պատմական աղբիւրները։ Հայ տնտեսական կեանքի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ տնտեսական կեանքի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ տնտեսական կեանքի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

X

Հայ իրաւունքի պատմական աղբիւրները։ Հայ իրաւունքի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ իրաւունքի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ իրաւունքի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

XI

Հայ կրօնական կեանքի պատմական աղբիւրները։ Հայ կրօնական կեանքի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ կրօնական կեանքի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ կրօնական կեանքի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

XII

Հայ քաղաքական կեանքի պատմական աղբիւրները։ Հայ քաղաքական կեանքի պատմական աղբիւրների քննադատական ուսումնասիրութիւնը։ Հայ քաղաքական կեանքի պատմական աղբիւրների ներկայ դրութիւնը։ Հայ քաղաքական կեանքի պատմական աղբիւրների ապագայ ուղղութիւնը։

Ինչպէս տեսնում էք, ծրագիրը շատ ընդարձակ է։ Մենք ուզում ենք, որ մեր հանդէսը լինի ամենաընդարձակ հանդէսներից մէկը

հետ։ Ի չարիէ, այդ ժամանակամիջոցում IV-դ բաժանման աշակերտութիւնները միայն հանդիսատեսների դեր են կատարում։ Ահա թէ ինչ տեղ է դաստիարակութեան վնասակար կողմը։ Այս տեսակ սխալ հայոց գպրոցներում շատ հեշտութեամբ է անց կենում, որովհետև հեռուից, քննող, վարձատրող և կամ պատժող չկայ։ Կան, ճշմարիտ է, ատազ ուսուցիչներ, բայց նրանք էլ նոյն տեսակիցն են, նրանք էլ են այդպէս վարւում և այդպիսով մինը միւսի պատուհաբը կարկատում են ամբոխի առաջ։ Շնորհիւ ուսուցիչների անպատրաստականութեան՝ քնգհանուր տպաւորութեան՝ շատ քիչ գպրոցներ կըգտնուին, որ անցնելիս լինին նշանակած դասընթացքը։ Այդպիսով փորձը ցոյց է տուել, որ այն՝ ինչ որ մեր անփորձ ուսուցիչներն անում են 5 տարուայ մէջ միացած բաժանմունքների հետ, նոյնը մի որևէ լաւ տեհասին գիտակ ուսուցիչն անում է 3—4 տարուայ մէջ։

Ա. Ագապեան.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՇԱՒ, 23 սեպտեմբերի. — Մինչ ամրողջ Կովկասում, Թուրքիայում և քաղաքից 60 վերստ հեռու գտնուղ Լիւբլին քաղաքում ամառուայ տօների խոլերան կատաղած էր անում, այտեղ հիւանդանալու ոչ մէկ դէպք չէր պատահած. բայց այժմ, երբ նոյն տեղերում խոլերան համարեա վերջացած կարելի է համարել, այտեղ նոր մուտք է գործել։

Երեկուայ պաշտօնական տեղեկութիւններից իմանում ենք, որ խոլերայով հիւանդանալու մի քանի դէպքեր են եղած։ Թէ ինչպիսի ծաւալ կըստանայ այտեղ այդ հիւանդութիւնը — այդ տպաւորում կըտեսնենք։

Չնայած ձուք առած առողջապահական բոլոր հսկողութիւններին և քաղաքի մաքրութեանը (և հարկէ ոչ բոլոր թաղերում), այսուամենայնիւ խոլերան իւր համար այտեղ պատրաստ հող ունի։ Այդ նկատմամբ աւելորդ չեմ համարում մի փոքր հայեացք ձգել տեղական ժողովրդի և ընդհանրապէս հրէայ ժողովրդի կացութեան վրայ։

Վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ այս քաղաքում մօտ կէս միլիոն բնակիչ կայ, որոնց թուում միայն հրէայ ժողովրդի թիւը հասնում է 150,000-ի մարդու։ Ինչպէս առհասարակ ամեն երկրում, այդ ժողովուրդն այստեղ էլ իւր առանձին թաղն ունի, որն սկսւում է «Նալիվկայ» կոչուած փողոցից դէպի ցած։ Խօսքս վերաբերում է միայն այս թաղին, ուր բացառապէս միայն հրէայ վաճառականներով ու արհեստաւորներով է լիքը։ Նաա ժամանակ, երբ պատահում է, որ միօրևէ գործով մտնում ես հրէաների արհեստանոցը, սանգուինքներով բարձրանալիս տեսլաւան պէտք է լինիս ամիսներով չմաքրած կեղտոտութիւնների վրայով անցնել։ Վերևում առաջդ բացւում է նեղ և մուխ մինչանց, ուր մինհոյնը կըտեսնէք, ինչ որ բարձրանալիս։

Մնողների կողմից անհոգ մնացած մեկ ու կէտատ երեխաները, խափուշ խոնաւ գետնի վրայ, մէկ կատը հացը մէկ մէկու ձեռքից ագահաբար խլում են և իրար մագիլից քաշշում. բաղնում ես աբհեստանոցի գուռը և հաղնում կարելի է մտնել. խոհոն սունկի պէս առաջդ բռնում է երկար մերուքով, մինչև գետինը հասած երկար կեղտոտ վերնոյով վարպետ ժան կելը և հրաւիրում է նեղս։ Առանց կարգ ու կանոնի, խառնի խուռն խափուշած են այտեղ տան իրերկենները. սանգուինքով բարձրանալիս տեսլուած պէտք է լինիս ամիսներով չմաքրած կեղտոտութիւնների վրայով անցնել։ Վերևում առաջդ բացւում է նեղ և մուխ մինչանց, ուր մինհոյնը կըտեսնէք, ինչ որ բարձրանալիս։

Ծ

ՊԱՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

6 Հոկտեմբերի

Լոնդոն . . . . . 99,45. 99,60. 99,90.
Բեռլին . . . . . 49. 48,85. 49.
Պարիզ 39,70. 39,60. 39,67½
Գոլոմխակերքալ . . . . 7, 96 կ. 7. 98 գին ծ.
Մաքս. կուպոն . . . 159¾ – 160 կ. Ծախ.
Ազատ . . . . . 1,08 1,10 Ծախս.
Բաբաչին դեկ . . 4 վճհչն 5¼%
Պետական բանկի 5% տոմս.
1-ին շրջանի . . . . 103,12. – կ. ապր.
2-րդ . . . . . 103,12 — կ. ապր
6-րդ . . . . . 102¾ բ. — կ. գն.
100 և 1000 ր. արժեւրեան փոխառության 5½% տոմսեր.
1-ին շրջանի. . . . . .
2-րդ . . . . . 102,87 բ. — կ. ապր.
3-րդ . . . . . 105, բ. — կ. գն.
Առաջին 5% ներքին փոխառության տոմսեր
1-ին շրջանի . . . 237¼ բ. — կ. ապր.
2-րդ . . . . . 217 ա. — կ. ապր.
Երբորդ փակ. Պետ. հար.
բանկի . . . . . 191¼ բ. կ. գն.
5½% բհնաձև . . . . . կ. գն
Թերի քաղ. վարկի բնակը օբլիգ. կ. ապր.
Բաբաչի տրամադրության կապակ կ։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ուսուցչական ընկերության։
Երեքշաբթի Բանասիրական, Օգնության և Պոլսի միջեւ։

Բախտից դառս է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկույթ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերույթ ժամը 2-ին շաբաթում ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բախտ հառնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։ Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Սեբաչի և Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

Պատային և սպրանքարկիր-մարդատար շոգենաւերի երեւեւակութիւն Փոթիի, Բաթումի և Օդեսայի միջեւ։

Փոթի հառնում է.

Պատային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքարկիր - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքարկիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին

Փոթիից դառս է գնում.

Պատային-մարդատար շոգենաւը Օդեսա և Հանապազորեն գանուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Պատային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։

Ապրանքարկիր - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքարկիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Հանապազորեն գանուած նաւահանգիստները։

Ապրանքները տարբեր գին.

Բաթումից գնում է գնում հինգշաբթի օրերը գիշերույթ ժամը 1-ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկույթ ժամը 2-ին։

Ապրանքարկիրը մարդատար շոգենաւերի վրայ բնդունում են II և III կարգի ուղեւորներ և առանց ուղեւորի պայմանների։

Փոխադրությունը գանում է Թիֆլիսի ապ. բակի շինության մէջ № 117 և 118։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Թիֆլիսի գրավաճառանոցներում վաճառում են

ՆՐԳԻՋ ՉԱՄՉԱՆԻ

ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Գինը 20 կոպեկ։

(347) 5—4.

ԽՈՄԲՈՎ և ՆԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԲԱՅԵԱՆՑՆԵՐԸ յաւօք սրտի յայտնելով առաջինը՝ իր եղբօր և երկրորդը՝ իր տագեր

ԱԻԵՏԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԲԱՅԵԱՆՑԻ

մահը, խնդրում են բարեկամներին և ծանօթներին ներկայ լինել Հանգուցեալի յուղարկաւորութեանը և թաղմանը, որը տեղի կունենայ ամսոյս 8-ին, հինգշաբթի։ Հանգուցեալի մարմինը կըտանուի իր բնակարանից՝ Գէօրգիևսկի հրապարակ (կոլոլ-թագ, տուն Ոսկանեանի—նախկին Զայգէշտեանի) Նորաշէնի սուբբ Աստուածածնին եկեղեցին՝ առաւօտեան 10 ժամին։

Ամբիծքը կատարուելու է ամսոյս 7-ին, չորեքշաբթի ժամը 5-ին երեկոյեան։

(356) 2—2.

ՁՈՒԻ ՍԱՓՈՆ

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.

Ա. ՄՅՈՒՐՅԵՒԵՑ

(M.) 52—9

ՅԻՆԶ ձեռք բերել ցանկացող հայ ուսուցիչներին ամենամատչելի գներով պատրաստում է ուսուցչական ինստիտուտն աւարտած մի փորձուած ուսուցիչ։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

10—3

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՆԻԿՈՂԱՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲՈՋԱՐՋԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Գոյութիւն ունի 1858 թուից)

Յարգելի Հաստատութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում իմ գործատանում պատրաստուած ոսկեայ օձաչք (կրախմալ) պապիրոսների վրայ, որոնք պատրաստւում են յատկապէս յարմարեցրած մեքենաներով շատ մաքուր։ Այդ կերպով պատրաստուած պապիրոսները գործածելով ս. պ. ծխողներն ապահով են մնում օձալի անախորժ համից և անմաքրութիւնից։

Պարձենալ ստացել եմ տաճկական ամենագնահատելի հաստատէտ ծխախոտներ, և պատրաստւում են շատ չափաւոր գներով իւրաքանչիւր ծխողի ճաշակին համեմատ։ Պատուէրներն ընդունւում են։ Վերցսվայա փողոցում մագազին № 1.

(230) 10—9

ՆԿԱՐԻՉ ԳԵՂՎԻՉ ՆԱԶԱՐԵԱՆ

Կարճ ամառանոցից Թիֆլիս վերադարձած լինելով, բնակւում է Պուշկինսկայա փողոցում, առուտուր Հոգևոր սեմինարիայի և սքուէրի պիմայ «Աթինե» հիւրանոցում № 10։

Նկարչին տեսնել ցանկացողները կարող են գտնել նրան իր բնակարանում ամենայն օր երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

10—3.

Գոլովինսկի պրոսպեկտի վրայ Ռէյտերի տանը «Սարագուբի» հիւրանոցի կողքին չեռնոսա փեներով վաճառւում է

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՍՈՒՐՃ (ԿՈՖԵ)

ամեն տեսակ—ծէծաղ, քոված, հում և այլն։

(345) 5—5.

"ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ"

Առաջին գիրքն ստացուեցաւ Թիֆլիսում և շատով կուղարկուի բաժանորդներին։

Ա. ԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ Է

I. Յառաջաբան—հրատարակիչ.
II. Յովհաննէս Ամոս Կոմենիոսն ու նրա մանկավարժութիւնը. Յ. Բարխուդարեանց.
III. Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից) Յ. Թ.
IV. Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը և նրա կազմակերպութիւնը։ Յ. Բարխուդարեանց.
V. Բարոյական փիլիսոփայութիւն — Ս. քահ. Սահակեանց.
VI. Կովկասեան մանկավարժների արդի գերը իրենց առճհաղատակ ազգայինների գործում. Յ. Տէր Միրաքեանց.
VII. Համառօտ ծրագիր Նեբսխեան Հոգևոր ուսումնարանի գիշերօթիկ սանների դպրոցական ճանապարհորդութեան. Խաչակ Յարութիւնեան.
VIII. Կամքի զարգացումն (հոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ)։
IX. Լինհարդ և Գերտրուդ գործ Հոլնրիխ Պեստալոցցու Ի. Յ.
X. Գրագիտութիւնը Ռուսաստանի մէջ (վիճակագրական տեղեկութիւններ)։
XI. Պրուսիայի ժողովրական դպրոցների մասին (վիճակագրական տեղեկութիւններ)։
XII. Բուլղարիայի դպրոցները (վիճակագրական տեղեկութիւններ)։
XIII. Ընդհանուր տեսութիւն մանկավարժական աշխարհից. Մարմօնիկ։
XIV. Ընդհանուր մանկավարժութիւն. Տ. Յիլեր. Ի. Յ.
XV. Մանկական խաղերի նշանակութիւնը դաստիարակութեան համար։
XVI. Դրախօսութիւններ
1. Արտիանեանց Աւետիք արևելեան ազգերի հին պատմութիւնը. Բար.
2. Praf. Dr. Lazarus-Jdeale Fragen
3. Bembranbt als Ersiher.
XVII. Մանկավարժական տեղեկութիւններ։
XVIII. Մի քանի խօսք։ Յ. Բարխուդարեանց

«Մանկավարժական գրադարանի» բաժանորդագինն է 2 ր.
Իւրաքանչիւր գրքի անժէքն է 1 ր. 50 կ.

Երկրորդ գիրքը լոյս կըտեսնի դեկտ.։ Բաժանորդագրութիւնը շարունակւում է։

«Մանկավարժական գրադարանի» խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ Іоанесу Бархударянцу Николаевск. ул. № 23 д. Завріева

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեանց. 4—3.

Подписка на 1892 г. ПРОДОЛЖАЕТСЯ

ГОДЪ ТРЕТІЙ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1893 ГОДЪ

НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЛИТЕРАТУРНО-ИСТОРИЧЕСКІЙ ЖУРНАЛЪ

ВѢСТНИКЪ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ

(не менѣе **5000** страницъ въ годъ лучшихъ иностранныхъ произведеній).

„**ВѢСТНИКЪ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ**“ выходитъ ежемѣсячно. въ форматѣ „Вѣстн. Европы“, по слѣдующей программѣ: 1) романы, повѣсти и всякаго рода произведенія художествен. литературы; 2) историческіе разсказы, біографіи, мемуары и очерки по исторіи культуры; 3) путешествія географическіе и правоописательные очерки и 3) смѣсь, анекдоты. извѣстія и объявленія.

Въ видѣ **ПРИЛОЖЕНІЯ** къ „Вѣстнику“ подписчики получатъ обширный историко-критическій трудъ о „**ХРИСТОФОРѢ КОЛУМБѢ**“ американскаго ученаго Уинсора—результатъ его долголетняго и самостоятельнаго изученія въ библіотекахъ и архивахъ первоисточниковъ о Колумбѣ, со множествомъ иллюстрацій и рѣдчайшими картами. Здѣсь подвергнута анализу вся литература о знаменитомъ мореплавателѣ, открывшемъ Америку, начиная съ его писемъ, отчетовъ и дневниковъ, и кончая самыми позднѣйшими европейскими и американскими изслѣдованіями о его дѣятельности. **Переводъ съ англійскаго изданія, стоющій въ продаже болѣе 13 р., сдѣланъ подъ редакціей Ѳ. И. Булгакова и всѣ иллюстраціи подлинника въ точности воспроизведены въ нашемъ изданіи.**

ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГОДЪ ПРЕЖНЯЯ: съ доставкою и пересылкою **4 р.**, безъ доставки и пересылки **3 р. 50 к.** Гг. служащіе въ казенныхъ и частныхъ учрежденіяхъ пользуются разсрочкою.

ПОДПИСКА НА 1892 ГОДЪ ПРОДОЛЖАЕТСЯ

Подписка принимается: въ С.-Петербургѣ—въ Конторѣ Редакціи, ГОСТИНЫЙ ДВОРЪ, Зеркальная линія, № 63, магазинъ П. Ѳ. ПАНТЕЛЕЕВА (противъ Пажескаго Корпуса), ВЪ МОСКВѢ—въ Конторѣ Н. Н. ПЕЧКОВСКОЙ, Петровскія линіи и въ книжномъ магазинѣ „НОВАГО ВРЕМЕНИ“, уг. Кузнецкаго моста и Неглинnаго проѣзда, д. Шориной, **а гг. иногородные благоволятъ адресоваться** въ Редакцію, С.-Петербургъ, Верейская ул., № 16, собств.

„**ВѢСТНИКЪ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ**“ **за 1891** годъ высылается въ губерніи; Выборскую, Новгородскую, Олонецкую, Псковскую, Тверскую и Эстляндскую за 4 р.;—Виленскую, Витебскую, Владимірскую, Вологодскую, Гродненскую, Калужскую, Ковенскую, Костромскую, Курляндскую, Лифляндскую, Ломжинскую, Минскую, Могилевскую, Московскую, Орловскую, Рязанскую, Смоленскую, Сувалскую, Тульскую, Улеаборгскую, и Ярославскую за 5 р.,—а во всѣ остальные губерніи за 6 р.

Редакторъ **А. Н. Энгельгардтъ**. Издатель **Г. Ф. Пантелеевъ.**

(Ф.) 6—1.

Дозволено цензурою Тифлисъ 7-го Октября 1892 г. Տպարան «Կաւկազ» լրագրի Типографія, «Кавказъ» Гол. пр. домъ Чихахова.